

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19/08

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի 2019թ.

Մասնակիցների ցուցակ՝

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան      | 8. Իգոր Մկրտումյան     |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Լիաննա Գալստյան     |
| 3. Աննա Կարախանյան     | 10. Կոլյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերոյան        | 11. Միսակ Խաչատրյան    |
| 5. Արման Խաչատրյան     | 12. Քրիստինա Հակոբյան  |
| 6. Արման Ներսիսյան     | 13. Քրիստինե Գյոնջյան  |
| 7. Գրիգորի Սադյան      |                        |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության մի շարք անդամներ՝ Աշոտ Հարությունյանը, Առնակ Մելիքյանը, Ավետիք Կարայանը, Գրիգոր Պետրոսյանը:

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Քրիստինա Հակոբյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է: Նա նշեց, որ նիստում նախատեսվում է քննարկել երկու կազմակերպությունների՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի և «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի 2020 թվականի ծախսերի նախահաշիվներին հավանություն տալու մասին հարցերը: Դրանով պայմանավորված, Իգոր Մկրտումյանն առաջարկեց տարանջատել այդ հարցերն՝ որպես օրակարգի երկու առանձին հարց և օրակարգը հաստատել այդ կերպ: Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ծախսերի նախահաշիվին հավանություն տալու մասին:
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2020 թվականի ծախսերի նախահաշիվին հավանություն տալու մասին:

1. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ծախսերի նախահաշիվին հավանություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ Ելոյթ ունեցավ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Արման Ներսիսյանը: Ելոյթի ավարտից հետո ծավալվեց քննարկում:

Քննարկման ընթացքում վարչության անդամներն անդրադարձան ընկերության հաստիքացուցակի հետ կապված հարցերին (իրենց տեսակետներն արտահայտելով ընկերության հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու և «Ինտերնետ հանրություն»

ՀԿ-ում որոշ հաստիքներ ստեղծելու, ընկերությունում նոր հաստիքներ ստեղծելու, այդ թվում՝ տեխնիկական մասնագետներով համալրելու նպատակահարմարության վերաբերյալ՝ արդյունքում հավանություն տալով առկա հաստիքացուցակին: Վարչության անդամներն իրենց տեսակետներն արտահայտեցին ընկերության տեխնիկական ուղղվածություն ունենալու վերաբերյալ հնչեցված կարծիքին՝ շեշտադրելով նաև իրավական և այլ ուղղվածությունների կարևորությունը, ինչպես նաև անդրադարձան ծախսերի նախահաշվի հետ կապված այլ հարցերին:

Կարծիքներ հնչեցին նաև, որ ընկերության տարեկան ծախսերի առանձին հոդվածներ հետազայում, հարկ եղած դեպքում, կարելի է վերանայել՝ հաշվի առնելով նաև սերվերների գնման և AMNIC-ի ծրագրային ապահովման վերազինման նպատակահարմարությունն ուսումնասիրելու և եզրակացություններ տալու նպատակով ստեղծված տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի կողմից ներկայացվելիք եզրակացությունները:

Քննարկման արդյունքում վարչությունը, որպես ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, ծայների 12 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց հավանություն տալ ներկայացված «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ծախսերի նախահաշվին:

Որոշում: Հավանություն տալ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի ծախսերի նախահաշվին:

2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2020 թվականի ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանը: Ելույթի ավարտից հետո, ծավալված քննարկման արդյունքում, հաշվի առնելով նաև օրակարգի նախորդ հարցի շուրջ տեղի ունեցած քննարկումները, կազմակերպության վարչությունը ծայների 12 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց հավանություն տալ ներկայացված «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2020 թվականի ծախսերի նախահաշվին:

Որոշում: Հավանություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2020 թվականի ծախսերի նախահաշվին:

Նիստի նախագահող՝

Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝

Քրիստինա Հակոբյան